բազմութիւն էր հաւաքւել, որ ստիպւած էինք անցնելու մի ամբողջ շարքի վրայից հասնելու համար վերջապէս ետեւի ազատ նաւակներից մէկը:

Նաւավարը թռաւ նաւի վերջը, ձեռք առաւ թիակը, որ միաժամանակ ղեկի դերն էր կատարում, ու մեր նաւակը թափ-թափ տալով դէպի ափը շարժւեց:

Սրախօսները Վլադիվոստոկում ֆունէին «юли-юли» են ասում, որովհետեւ գնալիս այնպէս է ճօճւում, որ որոշ աստիճանի հմտութիւն պիտի ունենաս առանց մի բանից բռնելու ոտքի վրա մնալու համար:

Եւ ահա աւելի ու աւելի մօտենում է մեզ տափարակ ափը իր փայտակերտ շէնքերով:

Մաքուր քարափը ձգւում է եզերքին՝ խուզւած ծառերով ստւերաւորւած:

Այստեղ են ընդհանրապէս եւրոպական առեւտրական հաստատութիւնները, բանկերն ու զանազան այդ կարգի շէնքերը: Իսկ աւելի վեր, սարի լանջին, ցրւած են եւրոպական վիլլաներն ու դեսպանատները իրանց զանազանագոյն ծածանւող դրօշակներով:

Շէնքերը թէեւ եւրոպական են, բայց նրանց վրա մի ինչ-որ ճապոնական դրոշմ կայ: Նրանք բոլորը աչքի են ընկնում իրենց շինւածքի մի առանձին թեթեւութեամբը, որի շարժառիթը Ճապոնում յաճախ կրկնւող երկրաշարժերն են:

Մենք կանգ առանք վերջապէս քարէ նաւամատոյցի առաջ: Մեր ափի վրա երեւալը ամեն կողմից դէպի մեզ քաշեց լծւորների (ջինրիկիշաների) մի ահագին բազմութիւն, որոնք ճարտարախօս ժպիտով մատնանիշ էին անում իրանց մանրիկ կառքերի վրա: